

14. ՄՈՎՍԷՍ՝ ԼՈՒՍԱՐԱՐ ԷՋՄԻԱՑՆԻ

1626ին մօտաւորապէս եկած էր Երեւան Շահ Աբասի նախարարներէն մին՝ Բայինդուր բէկ: Սա օր մը Ամիրզունա խանին¹ ընկերակցութեամբ շրջան կ'ընէր քաղաքին մէջ. իսանը բերաւ զինքը նաեւ Ս. Անտնիայի անապատը, ծանօթացնելու անոր իւր բարեկամ Մովսէս եպիսկոպոսը: Մովսէս մեծարեց հիւրերը նուիրելով անոնց եօթնական սպիտակ

¹ Ամիրզունայ իսան 1625 զարնան ի Վերս Մոզրովի դէմ պատերազմի ժամանակ կը վերաւորուի եւ քիչ յետոյ կը վախճանի. Hammer, Geschichte des osmanischen Reiches, III, 44: Մահը ճշդագոյն տեղի ունեցաւ 1626ին, հաւանօրէն տարւոյն սկիզբները: Յաւոր ձերունի վարդապետն այս թուին Աւետարան մը կ'օրինակէ. Յիշատակարանին մէջ կը գրէ ի մէջ այլոց. «Բայց զրեցաւ սայ ի թվարբերութիւնս հայկական տունարիս ՌէՆ. ի յերկիրս Աբարազա, ի զիւզս որ կոչի Առինջք, ի վանք սուրբ Մարիամ Աստուածածնին... ի թագաւորութեան Շահ Ապպին. իշխանութիւն Ամիրզունա իսանին. այսմ ամի փոխեցաւ աշխարհէս եւ որդին նորա Թահմազգուլի իսան զրին յերեւանա: Դարձեալ յիշեցէք գտիեգերալուս վարդապետն մեր զՄովսէս, որ այս սուրբ Աւետարանիս բուխքն նա շնորհեաց. Աստուած զիւր հոգին երկոտասան սուրբ վարդապետաց դասուն դասակից եւ պսակակից արասցէ Քրիստոս Աստուածն մեր. ամէն»:

Գրիչն Յակօր վարդապետ օրինակութիւնս եւ Աւետարանիս նկարագրողումը կատարած է 77ամեայ հասակին. կը ինդրէ յիշել «հայրն իմ զպարսն Բարէն, մայրն իմ Եղիսարէթն եւ հաւրեղրայրն իմ Ստեփաննոս կաթողիկոսն. հարազատ եղբայրն իմ զՄանուէլ եպիսկոպոսն, Էսամբուղէն, Ամիրսալան, Մելքոն խաւճէն. եղբաւորորդիքն իմ զպարնտէր Յոհաննէսն, զԴաւիթ ճանն... վայելող սորա Յոհաննէս արքեպիսկոպոսն, որ վերակացու է վանիցս եւ առաջնորդ»: Չեռ. Կէզ զիւղի Քիչիրեան ընտանեաց (Չ. Յ. Գօսեան՝ Յուցակ հայերէն ձեռագրաց Կարնոյ զիւզօրէից, Թ. 30. անախպ):